ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 1167-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 1-ին կետի 15-րդ ենթակետով նախատեսված չափորոշիչ)

Մարզի կառավարման մարմինների և բնակչության պատրաստումը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում

Գնահատման չափորոշիչներ	Կատարված աշխատանքները՝ ըստ ենթաչափորոշիչների
1. Բնակչության ազդարարման համակարգերի նախապատրաստում և գործունեության աշխատանքների կազմակերպում	Բնակչության ազդարարման համակարգը՝ էլեկտրական շչակների տեսքով, ներդրված է մարզի 44 համայնքներից 19-ում :
2.Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության թեմաներով հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական և օբյեկտային ուսումնավարժությունների կազմակերպում և անցկացում	ՀՀ Վայոց ձորի մարզում 2015 թվականին «Մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման տարեկան հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումները կատարվել են 100%-ով. - Վայոց ձորի ՔՊ մարզային ծառայությունների շտաբի պետերի հետ անցկացվել են հրամանատարական պատրաստության պարապմունքներ, - ՀՀ ՏԿԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Ա.Պետրոսյանի ղեկավարությամբ 2015 թվականի փետրվարի 25-27-ը Վայոց ձորի մարզում կատարվել են ՔՊ վիճակի համալիր գնահատման աշխատանքներ, որի շրջանակներում անցկացվել է շտաբային վարժանք «ՀՀ Վայոց ձորի մարզի ՔՊ ղեկավար կազմի գործողությունները ՔՊ համակարգի պատրաստականության բերման միջոցառումների իրականացման ընթացքում» թեմայով, - Վայոց ձորի մարզի Աղավնաձորի միջնակարգ և Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցներում անցկացվել են <<Ուժեղ երկրաշարժի դեպքում տարահանման և փրկարարական աշխատանքների իրականացում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, - 2015 թվականի ապրիլի 15-ին և 20-ին <<Վայոց

	ձոր>> ԳԳՄ Ջերմուկի և Վայոց ձորի <<Վայոց ձոր>> ԳԳՄ Վայքի տարածքային տեղամասերում անցկացվել են <<Վայոց ձորի ԳԳՄ Վայքի տարածքային տեղամասի անձնակազմի գործողությունները միջին ճնշման գազատարի վթարի դեպքում>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, - ՀԷՑ ՓԲԸ <<Արաքս>> մասնաճյուղի <<Եղեգնաձոր>> էլեկտրական ցանցում անցկացվել է հատուկ-տակտիկական ուսումնավարժություն <<Հետախուզական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը Գլաձոր համայնքի հոսանքազրկման դեպքում>> թեմայով: - Վայոց ձորի մարզի 29 համայնքներում անցկացվել են <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ուժեղ երկարաշարժի դեպքում>>, <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սելավների առաջացման դեպքում>> և <<Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը դաշտային հրդեհների առաջացման դեպքում>> թեմաներով շտաբային ուսումնավարժություններ, - ՀՀ ԱԻ աշխատողի օրվա կապակցությամբ Վայոց ձորի մարզի 10 հանրակրթական դպրոցներում անցկացվել են <<Հրդեհի առաջացման դեպքում հրդեհաշիջման և տարահանման միջոցառումների իրականացումը>> թեմայով օբյեկտային վարժանքներ իսկ 8 հանրակրթական դպրոցներում և 2 ուսումնական հաստատություններում դասախոսություններ <<ՀՀ ՏԿԱԻ նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները>> թեմայով, - ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ Վայոց ձորի մարզի 10 հանրակրթական դպրոցներում անցկացվել են «Անձնակազմի պատսպարման իրականացումը «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում» թեմայով օբյեկտային վարժանքներ, իսկ 10 ուսումնական հաստատություններում անցկացվել են դասախոսություններ <<Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությունը>>, <<Հիրդեհի ժամանակ մարդկանց փրկումը>> թեմաներով <<ՔՊ համակարգի դերը և հիմնական խնդիրները>> թեմաներով, - 2015 թվականի հունիսի 10-ին անցկացվել է հրամանատարաշտաբային ուսումնավարժություն

	<<Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը Կեչուտի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում>> թեմայով, - 2015 թվականի սեպտեմբերի 8-ին Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում անցկացվել է <<Որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը Արարատ առողջարանի մասնակի փլուզված մասնաշենքում>> թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն, - 2015 թվականի հոկտեմբերի 27-ին անցկացվել է շտաբային ուսումնավարժություն <<Բնակչության մասնակի տարահանումը Խաչիկ համայնքից հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում>> թեմայով :

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ն.ՍԻՄՈՆՅԱՆ

24.12.2015թ.